Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 38-րդ, 49-րդ, քաղաքացիական դատավարություն բաժնի 11-րդ, 27-րդ, 29-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 38

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/0313/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք միայն քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները կամ այդ ընթացքում անձանց տված բացատրությունները պահանջվող գումարի հանձնման վերաբերյալ այլ վերաբերելի գրավոր ապացույցի բացակայության պայմաններում կարող են դիտվել բավարար փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար, արձանագրել է, որ միայն հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով կամ ցուցմունքներով չի կարող հիմնավորվել փոխառության իրավահարաբերության ծագման հանգամանքը, քանի որ նախ՝ նման ապացույցները ժամանակագրական առումով ձևավորվում են փոխառության առարկայի ենթադրաբար փոխանցումից ավելի ուշ, հետևաբար գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու հիմքով ենթադրյալ փոխառության գործարքն առոչինչ է: Բացի այդ, դրանք կամային ակտ

որակվել չեն կարող, քանի որ ուղղված չեն կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, այլ քրեադատավարական վարույթի շրջանակներում դրանով կանխորոշված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ են:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն կարող է կազմել այն դեպքը, երբ ենթադրյալ փոխառության երկու կողմերն էլ հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրենց տված բացատրություններով կամ ցուցմունքներով ընդունել են միմյանց միջև փոխառության իրավահարաբերության գոյության փաստը և հետագայում այդ իրավահարաբերությունից բխող վեճով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում տվյալ փաստը չի վիճարկվել ենթադրյալ փոխառուի կողմից կամ չի հերքվել այդ գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ դրանք հարցի լուծման համար էական նշանակություն չունեն:

Հարց 49

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները Հանձնաժողովը համարում է հիմնավոր այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

Նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Նշվածից հետևում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այդ թվում ապրանքների բաղադրամասային թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման այդ թվում արտադրողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից, այնուամենայնիվ նույն օրենգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ եթե վնասի առաջացմանը կամ մեծացմանը նպաստել է տուժողի կոպիտ անզգուշությունը, ապա հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված 2-րդ տարբերակը, այն է՝ վնասի հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի

աստիճանից, ևս կարող է համարվել որպես առաջադրված հարցի ճիշտ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 11

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, վկայակոչված նորմի համաձայն՝ արգելվում է այն ապացույցի օգտագործումը, որը ձեռք է բերվել հիմնական իրավունքների խախտմամբ, որպիսի պայմաններում Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված գ) տարբերակը, այն է՝ ոչ, չի կարող համարվել ճիշտ, քանի որ այն թերի է:

Հարց 27

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 21.02.2020 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածությունը կարող է համարվել նախադատելի նշանակություն ունեցող փաստ, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է պարզի հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Ընդ որում, նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է իրավունքների դատական պաշտպանություն հայցող կողմը՝ հայցվորը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ որոշ դեպքերում հայցվորի շահագրգռվածությունն ապացուցման ենթակա չէ: Նշվածը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ միևնույն դատավարության մասնակիցների միջև նույնաբնույթ նյութահիրավական հարաբերությունից բխող նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող վեճով նախկինում քննված մեկ այլ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Այդ դեպքում օրինական ուժի մեջ մտած վճիռը կանխորոշիչ նշանակություն է ունենում նոր քաղաքացիական գործի քննության ընթացքում հայցվորի շահագրգռվածության հարցի համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ նման մոտեցումը նպատակ է հետապնդում բացառել միևնույն հանգամանքի (հայցվորի իրավական շահագրգռվածության) վերաբերյալ հակասական դատական ակտերի գոյության հնարավորությունը՝ ապահովելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը:

Հարց 29

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով (գլուխ 24) սահմանված կարգով քննում և

լուծում է աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը (այսուհետ՝ աշխատանքային վեճ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից հետևյալ ապացույցները պահանջելու մասին.

1) վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները,

2) վիճարկվող անհատական իրավական ակտում որպես հիմք վկայակոչված ներքին և անհատական իրավական ակտերը,

3) աշխատողի գործունեությունը կարգավորող պայմանագրերը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատարանը կարող է առաջարկել հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջները, համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը բոլոր դեպքերում վիճարկվող անհատական ակտը ճանաչում է անվավեր, եթե՝

1) դրանում նշված չէ համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական կամ իրավական հիմքը.

2) պատասխանողի կողմից խախտվել է աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտով սահմանված կարգը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԱՐԴ/3808/02/18 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով աշխատանքային վեճերով ապացուցման պարտականության բեռի բաշխման հարցին, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է աշխատանքային վեճերի քննության հատուկ ընթացակարգ:

Մասնավորապես, կարևորելով առավել սեղմ ժամկետներում աշխատանքային վեճերի լուծման դատավարական գործընթացը, օրենսդրորեն դատարանի վրա

պարտականություն է դրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման հետ մեկտեղ գործատուից պահանջել այն բոլոր ապացույցները, որոնք ընկած են վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում, որը գործատուի կողմից ենթակա է կատարման նույնպես առավել սեղմ ժամկետում՝ այդ որոշումն ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: Ընդ որում, այն դեպքում, երբ գործի նախնական քննության փուլում դատարանն առաջարկում է հայցվորին հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջը, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, դատարանն իրավասու է պահանջելու նաև այլ լրացուցիչ ապացույցներ: Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում, նկատի ունենալով աշխատողների խոցելի կարգավիճակը, նախատեսվել է նաև ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնից տարբերվող՝ ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոն: Այսպես, օրենսդիրը հստակեցրել է, որ աշխատանքային վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Ըստ այդմ էլ, սահմանվել է նաև, որ վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորող ապացույցը գործատուի կողմից, որպես ընդհանուր կանոն, կարող է ներկայացվել միայն դատարանի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, ինչը ենթադրում է այդ որոշումը գործատուի կողմից ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Հակառակ պարագայում, գործատուն պարտավոր է հիմնավորել իրենից անկախ պատճառներով ապացույցի ներկայացման անհնարինությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ աշխատանքային վեճերով դատարանը կաշկանդված չէ կողմի ներկայացրած գործի փաստական հանգամանքներով, ինչպես նաև այդ հանգամանքները հիմնավորելու նպատակով ներկայացված ապացույցներով, և իրավասու է առաջարկել վեճի կողմերին համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ: Ընդ որում, դատարանի կողմից նման առաջարկ ներկայացնելը չի ենթադրում բացարձակ հայեցողություն, դատարանը ցանկացած պարագայում սահմանափակված է գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու պարտականությամբ:

Նշածից հետևում է, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում նախատեսվել է ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնից տարբերվող՝ ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոն, այն է՝ վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Միաժամանակ, աշխատանքային վեճերով դատարանը կաշկանդված չէ կողմի ներկայացրած գործի փաստական հանգամանքներով, ինչպես նաև այդ հանգամանքները հիմնավորելու նպատակով ներկայացված ապացույցներով, և իրավասու է առաջարկել վեճի կողմերին համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում Հավակնորդի կողմից որպես ճիշտ տարբերակ

ընտրված դ) տարբերակը չի կարող դիտարկվել որպես սխալ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 3674 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 49-րդ հարցի և քաղաքացիական դատավարություն բաժնի 29-րդ հարցի պատասխանները գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ